



политического, социально-экономического и культурного развития истории не только армянских колоний, но и донских армян в целом.

Интерес к истории донских армян был вполне естественным. В детстве маленький Саркис часто слышал от бабушки по материнской линии, коренной нахичеванки Тамары Карповны рассказы о прадеде, нахичеванском купце Карпе Емельяновиче Авакове, о богатой и сытой жизни, которая протекала до революции... То и дело возникали различные вопросы, на которые, увы, не находилось ответов: по истории г. Ростов-на-Дону написаны горы литературы, но по истории соседней Нахичевани – ничего! И тогда появилось острое желание исследовать и написать.

Первая монография «История Армянской Апостольской церкви на Дону», написанная в 2001 г. в соавторстве с В.Г. Вартаняном, вышла мизерным тиражом (100 экз.) и сразу же исчезла с полок магазинов. Вторым тиражом она вышла в 2009 г. и тоже вызвала большой интерес. Многие нахичеванцы нашли в ней своих близких и далеких предков. Работа основывалась на обширной источниковой базе. Каждый факт, каждое событие были подтверждены соответствующими ссылками. Чтобы рассказать о судьбах нахичеванских священников, репрессированных в конце 1930-х годов, авторам пришлось совершить практически невозможное: получить доступ к материалам архива ФСБ по Ростовской области.

Вторая монография «Нахичеванское купечество» (Ростов-на-Дону, 2012 г.) – дань памяти прадеду Карпу Емельяновичу и всему нахичеванскому купечеству, которое автор называет «двигателем прогресса». В центре внимания автора находятся люди, которые своим неустанным трудом способствовали процветанию родного города. И вновь проработаны материалы различных архивов, опрошены дети, внуки и правнуки нахичеванских купцов. Практически все использованные в работах документы введены С.С. Казаровым в научный оборот впервые. Его многочисленные статьи по арменоведению посвящены людям, которые были связаны с родной Нахичеванью. Это представители совершенно разных профессий – ученые педагоги, врачи, юристы... : А. К. Дживелегов, Б. Г. Трапезонцев, М. И. Берберов, Г. И. Чубаров, Е. Шахазиз, М. И. Балабанов и многие другие.

Труды ученого, посвященные проблемам формирования армянской интеллигенции (автором исследована деятельность *Г. Патканова, А.К. Дживелегова*), самоуправления армян, армянского этноса, экономическим вопросам, издавались во многих научных журналах Российской Федерации (Ростов-на-Дону, Шахты, Таганрог, Армавир, Москва т. д.), а также в Армении (Ереван) и Украине (Одесса). Новый Нахичеван является родиной многих наших известных соотечественников (*М. Налбандян, Г. Чалхушьян, А. Мясникян, С. Срапионян, С. Врацян, М. Сарьян, М. Шагинян, и другие*). Все они играли важнейшую роль в укреплении дружбы между двумя братскими народами – русским и армянским, способствовали формированию в Армении первой республики (1918-1920 гг.), развитию экономической и культурной жизни нашей страны как в вышеуказанный, так и советский периоды.

Как настоящий патриот, С.С. Казаров не мог обойти вниманием деятельность известных нахичеванских соотечественников. Патриотизм ученый унаследовал, видимо, от своего прадеда – зинвора (солдат) Калуста, борца за освобождение Армении от турецко-османского ига в конце XIX в.

В настоящее время ученый продолжает свою деятельность, исследуя как историю Эпира, так и историю донских армян.

В свои 60 лет С.С. Казаров полон творческих планов и задумок.

**ЭДИК МИНАСЯН - доктор исторических наук, проф.**

**АКОБ АРУТЮНЯН - доктор исторических наук**

## ՀԱՎԵՐԺԻ ՃԱՄՓՈՐԴԸ



### ԷՂՎԱՐԴ ԳԱՆԻԵՅԱՆ ԴԱՆԻԵՅԱՆ

Հայ պատմագիտությունը ծանր կորուստ կրեց: 2016 թվականի հուլիսի 15-ին՝ 64-րդ տարում կյանքից հեռացավ ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հնաբնակ և առանցքային դասախոսներից մեկը՝ պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Էղվարդ Գալուստի Դանիելյանը:

Է. Գ. Դանիելյանը ծնվել է 1952 թ. ապրիլի 1-ին ՀԽՍՀ Նաիրիի շրջանի Եղվարդ քաղաքում՝ Պարսկաստանից հայրենադարձված, արմատներով դարադառնի ավանդապաշտ հայկական ընտանիքում: 1969 թ. ավարտել է Երևանի Պ. Յավրոպի անվան թիվ 131 միջնակարգ դպրոցը: 1972 թ. ընդունվել և 1977 թ. ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը:

1984-1988 թթ. ուսանել է ԵՊՀ ասպիրանտուրայում՝ «Հայոց պատմություն» մասնագիտությամբ: 1996 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Անդրկովկասում ապաստանած արևմտահայ գաղթականությունը 1914-1922 թթ.» թեմայով:

Աշխատանքային գործունեությունը է. Դանիելյանը սկսել է ԵՊՀ ՌԻԳՀԱ խորհրդում՝ որպես ավագ տեսուչ: Այնուհետև աշխատանքի է անցել մայր բուհի Հայոց պատմության ամբիոնում՝ զբաղեցնելով ավագ լաբորանտի, ասիստենտի, ավագ դասախոսի, իսկ 2000 թ. սեպտեմբերից՝ դոցենտի պաշտոններ:

1981 թվականից մինչև մահը Է. Դանիելյանը ԵՊՀ տարբեր ֆակուլտետներում դասավանդել է «Հայոց պատմություն» ընդհանուր դասընթացը, իսկ պատմության ֆակուլտետում՝ «Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն» ընդհանուր մասնագիտական և «Հայոց պետականության պատմություն» մագիստրոսական դասընթացները: Նրա ղեկավարությամբ պաշտպանվել են մագիստրոսական և ավարտական բազմաթիվ աշխատանքներ:

1997-1998 թթ. դասախոսել է Համազգայինի Բեյրութի Հայագիտական բարձրագույն հիմնարկում:

Որպես պատմաբան Է. Դանիելյանն իր կոլեգաների միջավայրում միշտ առանձնացել է նրանով, որ ուներ խոր գիտելիքներ հայոց պատմության բոլոր պատմաշրջանների վերաբերյալ, քաջատեղյակ էր ինչպես հայոց հին ու միջնադարյան պատմության աղբյուրներին, այլև նոր շրջանի արխիվային և այլ սկզբնաղբյուրներին: Շնորհիվ դրա, նա այն պատմաբաններից էր, ով ուներ ընդգծված ազգային, համակարգված և կուռ հայեցակարգ հայոց պատմության բոլոր պատմաշրջանների վերաբերյալ: Նրա դասա-

խոսությունները միշտ աչքի են ընկել գիտական բարձր մակարդակով, կուռ տրամաբանությամբ և հարցադրումների ինքնատիպությամբ:

Լայն էր Է. Դանիելյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը՝ ընդգրկել է Հայկական հարցի, Հայոց ցեղասպանության, Հայաստանի առաջին Հանրապետության և հայ գաղթականության պատմության մի շարք վիճահարույց հիմնախնդիրներ: 2005 թ. լույս է տեսել նրա «The Armenian Genocide 1894-1922» խորագրով մենագրությունը, որտեղ արվել են ինքնատիպ դիտարկումներ և լուրջ հարցադրումներ Հայոց ցեղասպանության պատճառների, իրագործման մեխանիզմների և թուրքական պետականության պատասխանատվության վերաբերյալ: Մահվանից հետո 2017 թ. լույս է տեսել նրա «Եղեռնից փրկված հայ փախստականները Անդրկովկասում 1914-1922 թթ. (շարժը, կացությունը, թվակազմը)» 15 մամուլ ծավալով ուսումնասիրությունը: Նորահայտ արխիվային և այլ սկզբնաղբյուրների հիման վրա շարադրված մենագրությունն ուշագրավ դիտարկումներ է պարունակում Անդրկովկասում ապաստանած հայ փախստականների, առաջին հերթին՝ արևմտահայ գաղթականության հետ կապված մի շարք խնդիրների վերաբերյալ: Էդվարդ Դանիելյանը հեղինակ է նաև շուրջ չորս տասնյակ գիտական հոդվածների, որոնցում առկա են լուրջ հարցադրումներ ինչպես վերը նշված հիմնահարցերի, այլև հայոց պատմության ցայտօր վիճահարույց մի շարք խնդիրների վերաբերյալ:

Է. Դանիելյանը նաև հեղինակել է «Հայոց պատմության հիմնահարցեր» բուհական ձեռնարկի (Երևան, 2000 թ.) և «Հայոց պատմություն» (Երևան, 2012 թ.) բուհական դասագրքի առանձին բաժիններ: Համահեղինակ է բուհական գործող ծրագրի:

Է. Դանիելյանն ընդգծված ազգային դիմագիծ և քաղաքացիական ակտիվ դիրքորոշում ունեցող մտավորական էր: Առօրյա կյանքում լինելով զուսպ և բնավորությամբ համեստ անձնավորություն՝ նա եռանդուն ու անզիջում էր դառնում, երբ հարցը վերաբերում էր ազգային խնդիրներին և Հայոց պատմության սկզբունքային հարցերին: Է. Դանիելյանը գործուն մասնակցություն է ունեցել 1988 թ. ծավալված Արցախյան համաժողովրդական շարժմանը՝ լինելով նրա ակունքներում, հանդիսանալով գաղտնի կոմիտեի անդամ:

Երկարամյա և արդյունավետ գիտամանկավարժական գործունեության համար Էդվարդ Դանիելյանը 2014 թ. պարգևատրվել է Հայաստանի Հանրապետության նախագահի շնորհակալագրով:

Հայտնի պատմաբանի, սիրված դասախոսի, ազնիվ քաղաքացու և ընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա նրան ճանաչողների, հարազատների, գործընկերների ու ուսանողների սրտերում:

**ԵՊՀ Հայոց պատմության ամբիոն  
Պատմության ֆակուլտետի դեկանատ**

## ՀԱԿՈՒԲ ԲԱՂՂԱՍԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

### ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏՈ



2017 թ. հունվարին կյանքից հեռացավ Երևանի պետական համալսարանի հրատարակչության վաստակաշատ խմբագիր, գրականագետ, բանասիրական գիտությունների թեկնածու Հակոբ Բաղդասարի Պետրոսյանը:

Հ. Պետրոսյանը ծնվել է 1928-ին Բաթումում՝ Մեծ եղեռնի տարիներին հայրենի երկրից տարագրված մշեցու ընտանիքում: Միջնակարգն ավարտել է տեղի հայկական դպրոցում, որից հետո բարձրագույն կրթություն ստանալու նպատակով տեղափոխվել է Երևան: Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետն ավարտելուց հետո՝ 1953-ին, մանկավարժական աշխատանքի է անցել Հրազդանի շրջանի Սուլակ գյուղի դպրոցում: 1960-ին արդեն Երևանի համալսարանի հրատարակչությունում էր: Այդ ժամանակից հրատարակչի մասնագիտությունը դառնում է Հ. Պետրոսյանի կյանքի հիմնական գործը:

1960-80-ական թվականները համալսարանի հրատարակչության բեղուն և արգասավոր շրջանը կարելի է համարել: Աշխատանքի անցնելով որպես խմբագիր, ապա վարելով հրատարակչության գլխավոր խմբագրի պաշտոնը (1976-ից)՝ Հ. Պետրոսյանն իր գործընկերների հետ, խորհրդային գրաքննության հսկողության պայմաններում, ազգանվեր գործունեություն է ծավալում: Ընթացիկ գիտաուսումնական գրքերի տպագրությանը զուգահեռ ծնունդ են առնում մի շարք ուշագրավ մատենաշարեր, որոնք, ընդլայնելով հայագիտության և գեղարվեստական գրականության հրատարակչության շրջանակները, մեծ հետաքրքրություն են առաջացնում գրական հասարակայնության շրջանում: Առանձնահատուկ ջերմությամբ է ընդունվում «Ուսանողի գրադարան» մատենաշարը, որի հատորյակները (հայ հին գրականությունից մինչև համաշխարհային գրականության գանձերը) հաճելի անակնկալներ էին մատուցում նույնիսկ խստապահանջ ընթերցողին: Համալսարանի հրատարակչությունը հայտնվում է գրահրատարակչական կյանքի ուշադրության կենտրոնում՝ արժանանալով բարձր գնահատանքի: Եվ այս ամենի մեջ անուրանալի վաստակ ունեւ գլխավոր խմբագիրը՝ իր անխոնջ գործունեությամբ:

Լայն էին Հ. Պետրոսյանի հետաքրքրության շրջանակները: Հրատարակչական գործի հետ մեկտեղ նա ժամանակ էր գտնում ընթացք տալու իր գրականագիտական մղումներին: Տարիներ շարունակ զբաղվելով արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչ, արձակագիր Գեղամ Տեր-Կարապետյանի (Մշո Գեղամ) գրական ժառանգության հարցերով՝ Հ. Պետրոսյանը գրում և հրատարակում է «Գեղամ Տեր-Կարապետյան (Մշո Գեղամ)» մենագրությունը: Այս աշխատանքն այնուհետև ներկայացնում է որ-

պես թեկնածուական ատենախոսություն և ստանում բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Հեղինակն առաջին անգամ ամբողջական տեսքով ներկայացնում է Գեղամ Տեր-Կարապետյանի կյանքն ու գործունեությունը, թեմատիկ բաժանման ենթարկում և քննում նրա ստեղծագործությունները: Մեր նոր գրականության մեջ Մշո Գեղամն այն եզակի հեղինակներից է, որ ամբողջական ու հավաստի տալիս է 19-րդ դարի երկրորդ կեսի Տարոն-Սասունի իրականության ուշագրավ պատկերը: Աշխատության «Բնաշխարհի գրականություն» գլխում Հ. Պետրոսյանն ուրվագծել է «գավառական գրականություն» կոչվող հոսանքի պատմությունը՝ Մկրտիչ Խրիմյանից մինչև Ռուբեն Զարդարյան: Նրա եզրակացությունը հստակ է. «գավառական գրականությունը» գրական առանձին հոսանք է և ոչ թե արևմտահայ գյուղագրություն, ինչպես փորձել են ներկայացնել՝ նկատի ունենալով արևելահայ գյուղագրական դպրոցը: Այդ շարժման նպատակն էր գրականության նյութ դարձնել Արևմտյան Հայաստանի գավառների կյանքը: Հայրենի գրականություն՝ հայրենի երկրի վրա. այս էր «գավառական գրականություն» հոսանքի հավատո հանգանակը:

1990 թ. առաջին անգամ մեզանում Հ. Պետրոսյանը կազմեց և լույս ընծայեց (Արշակ Մադոյանի հետ համատեղ) այդ հոսանքի հիմնադիր Խրիմյան Հայրիկի «Երկերի» միատորյակը, 1995 թ.՝ Մշո Գեղամի «Տարոնի աշխարհ» գիրքը (Ն. Զորյանի հետ) առաջաբանով, ծանոթագրություններով և Մշո բարբառի բառացանկով: Շարունակելով Գ. Տեր-Կարապետյանի գրական-պատմական ժառանգության ուսումնասիրությունը՝ 2003 թ. կազմեց և ընթերցող հասարակայնությանը ներկայացրեց նրա մեկ այլ ուշագրավ աշխատություն՝ «Տարոնի վանքերը, Ուղեւորի յիշատակներ», որտեղ ի մի են բերվել 19-րդ դարավերջին Տարոնի վանքերի իրական վիճակի, Մուշից Ուրֆա ձգվող հայկական գյուղերի, կրթական օջախների մասին Մշո Գեղամի հողվածները:

Արևմտահայ նշանավոր ու դեռևս չգնահատված գործիչների ժառանգությունը վերարժևորելու շնորհակալ գործը Հ. Պետրոսյանը շարունակում է նաև հետագա տարիներին: 2011 թ., այս անգամ որպես մենագրական հետազոտություն, հրատարակվում է նրա «Սէյլան (Արշակ Մադոյան). կեանքը եւ ստեղծագործութիւնը» գիրքը: Ժամանակի կրթական-մշակութային հայտնի գործիչ Սեյլանի կյանքը, գրական, պատմական ու ազգագրական գործերը Հ. Պետրոսյանը ներկայացրել է հմուտ հետազոտողի գրչով՝ հնարավորինս համակողմանիորեն տալով նրա գործունեության ամբողջական պատկերը:

Ազգային գրականության հիմնախնդիրներին Հ. Պետրոսյանն անդրադառնում է նաև իր գրականագիտական հողվածներում, գրախոսություններում, որոնք տպագրվել են հանրապետական և Սփյուռքի հայտնի պարբերականների էջերում:

1990-ականներին Հ. Պետրոսյանի տպագրած մի շարք հողվածներ (մասնավորապես նրա «Մայր բուհի հրատարակչությունը» հողվածը, 1994, N 3, էջ 84-92) ներկայացնում են Երևանի պետական համալսարանի հրատարակչության անցած ուղին, ձեռք բերած նվաճումները: Այստեղ աշխատելու տարիներին /մինչև 2010 թվականը/ նա մշտապես ակտիվ մասնակցություն է ունեցել «Երևանի համալսարանի հրատարակչության մատենագիտության» պրակները կազմելու և հրատարակելու աշխատանքներին:

2010 թ. ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան Էդիկ Մինասյանի անմիջական նախաձեռնությամբ տեղափոխվելով այդ ֆակուլտետ՝ Հ. Պետրոսյանը, չնայած առաջացած տարիքին, շարունակում է իր եռանդուն գործունեությունը և մինչև կյանքի վերջ /2017թ./ խմբագրում «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդեսը:

Առինքնող ու լուսավոր էր Հ. Պետրոսյանի մարդկային նկարագիրը: Նրա բարությունը սահմաններ չունեւ, իսկ գործիմացությունը, անմնացորդ նվիրումի հետ, լավագույն օրինակ էր գործընկերների համար: Անցնելով խորհրդային և հետխորհրդային փորձությունների միջով՝ անխաթար էր պահել իր էությունը: Մշտապես համեստ /բառի լավագույն իմաստով/ այս մարդուն օտար էին կեղծ կեցվածքները, բարձրագույն խոսքերը, քանզի վստահ էր՝ անհատի գոյությունն իմաստավորող ճշմարիտ գրավականը

նրա գործն է: Այդ գործի հանդեպ հավատարմությունն ու նվիրվածությունը անսպառ էին դարձնում իր լավատեսությունը:

Հ. Պետրոսյանի երկրային կյանքը հայ մտավորականի կերպարի լավագույն արտահայտություններից մեկն է մեզանում: Նրա ազնիվ ժպիտը, որ բխում էր հոգու մաքրությունից, անհնար է մոռանալ և իրեն հիշելիս ուզում եմ կրկնել շեքսպիրյան հանրահայտ տողը. «Նա Մարդ էր, Հորացիո, նմանը չես գտնի...»: Իրոք, իր տեսակի մեջ՝ անզուգական մարդ, որի հոգևոր գոյությունը դեռ երկար պիտի շարունակվի նրան ճանաչողների սրտերում:

**ԴԱԿԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ - քանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր**

## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**Էդիկ Մինասյան** - պ.գ.դ., պատմության ֆակուլտետի պրոֆեսոր, edikminasyan@ysu.am  
**Արտակ Մովսիսյան** - պ.գ.դ., պրոֆ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչ, artakmovsisyan@ysu.am  
**Հենգել Մանուչարյան** - փ.գ.դ., ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի պրոֆեսոր  
**Ֆելիքս Մովսիսյան** - պ.գ.դ., պրոֆեսոր, ՎՊՀ պատմության ամբիոնի վարիչ  
**Վալերի Թունյան** - Տուրիզմի և սերվիսի ռուսական պետական համալսարանի երևանյան մասնաճյուղի պրոֆեսոր, ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի դասախոս  
**Արման Եղիազարյան** - պ.գ.դ., ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, armanyeghiazaryan@ysu.am  
**Սամվել Պողոսյան** - պ.գ.դ., ԵՊՄՀ պատմության և իրավագիտության ամբիոնի փոխդեկան  
**Կարինե Եղիազարյան** - պ.գ.թ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ  
**Սամսոն Քառյան** - պ.գ.դ., պրոֆեսոր  
**Վահագն Հակոբյան** - պ.գ.թ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դոցենտ, v.hakobyan@ysu.am  
**Կարեն Խաչատրյան** - պ.գ.դ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի վարիչ, ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ  
**Գագիկ Ժամհարյան** - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ընդհանուր պատմության բաժնի գիտաշխատող  
**Էդուարդ Զոհրաբյան** - պ.գ.թ., ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դոցենտ  
**Ղավիթ Թինոյան** - պ.գ.թ., ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս  
**Էմմա Ստեփանյան** - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտաշխատող  
**Վարդիթեր Աբրահամյան** - պ.գ.թ., դոցենտ, Շիրակի պետական համալսարան, Պատմության և փիլիսոփայության ամբիոն, v\_abrahamyan@yahoo.com  
**Լիլիթ Մելիքյան** - ԵՊՀ պատմության ֆակուլտետի սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ  
**Գուրգեն Մուրադյան** - ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրոս  
**Ղավիթ Կարապետյան** - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի ասպիրանտ  
**Էդուարդ Հովհաննիսյան** - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի ասպիրանտ  
**Տաթևիկ Մինասյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի դասախոս  
**Արամ Խաչատրյան** - ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ (1999-2002 թթ. ), aram.khachatryan@megafood.am  
**Սուսաննա Առաքելյան** - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ  
**Նարինե Նուշերվանյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ  
**Էդուարդ Կեսոյան** - Ծովինարի Ա. Խաչատրյանի անվան միջն. դպրոցի պատմության ուսուցիչ, gevorgkesoyane@mail.ru  
**Աստղիկ Մովսիսյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի հայցորդ  
**Լուսինե Գրիգորյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոն, մագիստրոս  
**Մելիք Հովսեփյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ  
**Հենրիկ Աբրահամյան** - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս, պ.գ.դ., պրոֆեսոր  
**Լիլիթ Մատինյան** - ԵՊՀ հայցորդ  
**Սոնա Մելքոնյան** - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ  
**Ղավիթ Զուլհալյան** - Գորիսի պետական քոլեջի պատմության դասախոս, ԵՊՀ հայցորդ

**Կարինե Ասատրյան** - Գորիսի պետական քոլեջի անգլերենի դասախոս, կադրերի տեսուչ

**Նժդեհ Հովսեփյան** - ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի ասպիրանտ

**Վահե Հովսեփյան** - ԵՊՀ Պատմության ֆակուլտետ, Հայոց պատմության ամբիոն, մագիստրանտ

**Վարդան Մակիչյան** - ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի ասպիրանտ

**Գեղամ Ասատրյան** - ԵՊՀ պատմության ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ

**Առնակ Սարգսյան** - ԵՊՀ քաղաքական գիտության պատմության և տեսության ամբիոնի հայցորդ

**Գայանե Սոլախյան** - Երևանի հայ-ռուսական սլավոնական համալսարանի հայցորդ

**Ռոման Գազանչյան** - ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոն, մագիստրոս

**Զուլիետա Կճանյան** - ԵՊՀ համաշխարհային պատմության ամբիոնի դասախոս, ասպիրանտ

**Ժաննա Հարությունյան** - ԵՊՀ միջազգային հարաբերություններ և դիվանագիտություն ամբիոնի ասպիրանտ

**Արսեն Զուլֆալական** - ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվանագիտության ամբիոնի ասպիրանտ

**Գեորգի Կոլարով** - ք.գ.թ., Երևանի հայ-ռուսական սլավոնական համալսարանի և Վառնայի տնտեսագիտական համալսարանի դասախոս

**Անդրանիկ Առաքելյան** - ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտ

**Աշոտ Թովմասյան** - ՀՀ պաշտպանության նախարարության ռազմարդյունաբերության պետական կոմիտեի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ, քիժ 1-ին դասի խորհրդական, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

**Արշալույս Տետեյան** - Մ. Հերացու անվան ԵՊԲՀ հասարակագիտական առարկաների ամբիոնի և ԵՊՀ հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս

**Միեր Հովհաննիսյան** - պ.գ.թ., ՀՀ փոխտնօրեն, mher.hovhannisyan@ysu.am

**Ռաֆիկ Նահապետյան** - պ.գ.դ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի պրոֆեսոր

**Սաակ Տարոնցի** - ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի ասպիրանտ

**Արմինե Գաբրիելյան** - ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հայցորդ

**Ռայա Սարգսյան** - Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտաշխատող

**Հասմիկ Հարությունյան** – պ.գ.թ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի ասիստենտ

**Արուսյակ Ղարիբյան** - ՀԱԱՀ հայոց պատմության և փիլիսոփայության ամբիոնի ասիստենտ

**Մարինե Հարությունյան** - պ.գ.թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի գիտաշխատող

**Սիրանուշ Առաքելյան** - ՀՀ ԳԱԱ ՀԱԻ բանահյուսության տեքստաբանության բաժնի ավագ լաբորանտիստագոտող, nrane3@yahoo.com

**Հայկազ Հովհաննիսյան** - պ.գ.դ., ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, haykazh@mail.ru

**Հրանտ Ավանեսյան** - հ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի վարիչ, avanesyanh@ysu.am

**Սահակ Հովհաննիսյան** - մանկ. գիտ. թեկն., դոցենտ, ԵՊՀ փորձարարական հոգեբանության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, s.hovhannisyan@ysu.am

**Մարինե Մինասյան** - արվեստագիտության թեկնածու, ԵՊՀ հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի ասիստենտ, m\_minasyan@yahoo.com

**Հայկուհի Մուրադյան** - ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի դասախոս

**Սմբատ Հովհաննիսյան** - պ.գ.թ., Համաշխարհային պատմության ամբիոնի դոցենտ

**Անահիտ Զուրաբյան** - Ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի դասախոս

**Դիանա Հակոբյան** - ԵՊՀ պատմության ֆակուլտետ, մագիստրանտ,  
diana.hakobyan6ysumail@.am

**Արևիկ Մինասյան** - ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս

**Մարիաննա Եփրեմյան** - ԵՊՀ ռոմանական բանասիրության ամբիոնի դասախոս

**Ասյա Դարբինյան** - ԵՊՀ Հայաստանի հարակից երկրների պատմության ամբիոնի դասախոս

**Լիանա Մալխասյան** - ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի պետաիրավական հետազոտությունների բաժնի ասպիրանտ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Էդիկ Մինասյան, ԱՌԻԱՍԻՐՏ ՀԱՅՈՒՀԻՆ.....	3
Արտակ Մովսիսյան, ԿԱՐԵՎՈՐ ԴԻՏԱՐԿՈՒՄ «ԴԱՆԻԵԼՅԱՆ» ՆՇԱՆԱԳՐԵՐԻ ՄԱՍԻՆ.....	7
Հենգել Մանուչարյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՖԵՆՈՄԵՆԸ.....	13
Ֆելիքս Մովսիսյան, ԴԱՎԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆՆ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	23
Валерий Тунян, НАЦИОНАЛЬНАЯ ИДЕЯ И НАЦИОНАЛЬНЫЕ СОВЕЩАНИЯ В 1914-1917 ГГ. ....	41
Արման Եղիազարյան, ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԵՑԱԿԱՆ ՄԻՋԱԿԱՅՐԵՐԻ ԶԵՎԱԿՈՐՐՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ «ԴԱՍԱԿԱՆ» ԵՎ «ՆՈՐ» ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (ԼԻԲԵՆԱՆԻ ԵՎ ՌԴ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ).....	50
Սամվել Պողոսյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱԿԱՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐԸ 1878 Թ. ....	67
Կարինե Եղիազարյան, Քարմիլե Եղիազարյան, ԱՐՔՈՒՐ ՍԵՐՈՔ (ԿՅԱՆՔՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅՈՒՆԸ).....	81
Սամսոն Քառյան, ԴՐՎԱԳՆԵՐ ՀԱՅ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	91
Վահագն Հակոբյան, ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՆՈՒԹՅԱՆ ՄԻՆՉԲՈՒՇԵՎԻԿՅԱՆ ՓՈՒԼԸ .....	96
Կարեն Խաչատրյան, Գազիկ Ժամհարյան, ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌՕՐՅԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1920-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԻԶԲ) .....	108
Էդուարդ Զոհրաբյան, ՀԱՅ-ԱՂՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՊԿ ՌԱԶՄԱԿԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՐԱԿԱՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՋ .....	115
Դավիթ Թինոյան, ՀԵԹՈՒՄ Ա-Ի «ՄՈՆԴՈԼԱԿԱՆ» ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՄՈՆԴՈԼԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹՅԱՆ ԶԵՎԱԿՈՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ .....	121
Էմմա Ստեփանյան, ԱՄԵՐԻԿԱՀԱՅ «ԱՐԱՔՍ» ՀԱՆԴԵՍԸ (1905-1907 ԹԹ.).....	128
Կարդիթեր Աբրահամյան, X-XI ԴԱՐԵՐՈՒՄ ԲՅՈՒՋԱՆԴԻԱՅԻ ԶԱՎԹԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ՍՏԵՂԾԿԱԾ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՔԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇՁՐՏՈՒՄ .....	135
Լիլիթ Մելիքյան, ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ.....	143
Գուրգեն Մուրադյան, ՎԱՂՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԻՆԱ ՎԱՇՉԵՎԱՅԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....	148
Դավիթ Կարապետյան, ԱՇՈՑՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԸ XVIII ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՄՆԱՄՅԱԿՆԵՐԻՆ ԸՍՏ ՎԱՆՈՒՇՏԻ ԲԱԳՐԱՏԻՈՆԻԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ.....	153
Էդուարդ Հովհաննիսյան, ԴԱՐԱԲԱԴԻ /ԱՐՑԱՆԻ/ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԿՈՎԿԱՍԻ ՀՆԱԳՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՎԱԿԵՐԱԳՐԵՐՈՒՄ» .....	159
Տաթևիկ Մինասյան, ՀԱՅՈՒՀԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԲԴՈՒՀԱՄԻԴՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՐԳԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻՆ (XIX ԴԱՐԻ ՎԵՐՋ-XX ԴԱՐԻ ՍԿԻԶԲ).....	166
Արամ Խաչատրյան, ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅԱՍԵՐՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԱՆԵՐՈՒՄ 1900-1907 ԹԹ. ....	174
Սուսաննա Առաքելյան, ԲԱՔՎԻ ՀԱՅՈՑ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ .....	185
Նարինե Նուշերվանյան, ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂԹԱԿԱՅՐԵՐԻ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ XIX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ.....	191

Էդուարդ Կետոյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ .....	196
Աստղիկ Մովսիսյան, ՀՅԴ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳԸ 1920-ԱԿԱՆ ԹԹ. ....	206
Լուսինե Գրիգորյան, ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ (1964-1985 ԹԹ.) .....	215
Մելիք Հովսեփյան, ՄԵՐՋԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԱՊԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ (1964-1985 ԹԹ.) .....	223
Լիլիթ Մատինյան, Հենրիկ Աբրահամյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՆՈՒՆԴ .....	229
Սոնա Մելքոնյան, Էթնիկ ՋՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂՐԲԵԶԱՆՈՒՄ ՀԱՅԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ (1988-1991 ԹԹ.) .....	237
Ղազար Զուլիալյան, Կարինե Ասատրյան, ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1991-1994 ԹԹ. ԵՎ ՆՐԱ ԱՐԺԵՎՈՐՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ .....	242
Նժդեհ Հովսեփյան, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿԱԶՄԱՎԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԲԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ 1991-2001 ԹԹ. ....	250
Վահե Հովսեփյան, ԽՈԶԱԼՈՒԻ ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ .....	261
Վարդան Մակիջյան, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՈՒՆԸ ՔՐԵԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ .....	269
Գեղամ Ասատրյան, ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԱԽՍՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ .....	273
Առնակ Սարգսյան, ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1995-2017 ԹԹ. ....	281
Гаяне Солахян, ЕВРАЗИЙСТВО В СОВРЕМЕННОМ ИДЕЙНО – ПОЛИТИЧЕСКОМ ПРОСТРАНСТВЕ РОССИИ .....	289
Ռոման Գազանջյան, ՄՈՆԻՏՅՈՒՆ ԴՈԿՏՐԻՆԱՆ ՈՐՊԵՍ ԱՄՆ-Ի XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՍՅՈՒՆ .....	295
Զուլիխտա Կճանյան, ՊԱՏՄԱՍԽԱՆԱՏՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԸ. ԿԱՆԱԴԱԿԱՆ ՈՒԴԻՆ ԵՎ ԼՈՐԴ ԴԱՐԵՄԸ .....	302
Ժաննա Հարությունյան, ՇԱՈՒ ԴԸ ԳՈՒԻ ԱՖՐԻԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	310
Արսեն Զուլֆալալյան, ԶՐԱՅԻՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ԹՈՒՐԲ-ՍԻՐԻԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ 90-ԱԿԱՆՆԵՐԻՆ .....	316
Георгий Коларов, МАОИЗМ В ЛАТИНСКОЙ АМЕРИКЕ. СЕНДЕРИЗМ, КАК МАОИЗМ КОНЦА XX ВЕКА .....	322
Անդրանիկ Առաքելյան, ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻԶԱԿԵՏՈՒՄ (1992-2011 ԹԹ.) .....	328
Աշոտ Թովմասյան, ԻՍՐԱՅԵԼԻ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՈԱԶՄԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՄԱԽՐԻ ԶԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ .....	333
Արշալույս Տետեյան, ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԶԵՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԿԵՂՃԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....	337
Միեր Հովհաննիսյան, ԳԻՏԱԿԱՆ ՀՂՈՒՄՆԵՐԻ ԶՎՈՐՈՇԻՉՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ .....	344

***ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ***

Ռաֆիկ Նահապետյան, ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵՎՈՒՆԴՈՍԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՄԱՍԻՆ .....	349
Սաակ Տարոնցի, ԱՐԵՎ-ՍԿԱՎԱՌԱԿԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԸ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԲՐՈՆԶԵ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՐԴԱՍՈՏԻՎՆԵՐՈՒՄ .....	355

Արմինե Գաբրիելյան, ԱՐՑԱԽԻ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏԻ ԱՆՏԻԿ ԽԵՑԵՂԵՆԻ ՀԱՐԴԱՐԱՆՔԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՓՈՐՁ (Մ.Թ.Ա. I – Մ.Թ. III ԴԴ.)	372
Ռայա Սարգսյան, ՄԻՐԱՔ ՁՅՈՒԴԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԵՂՈՒՄՆԵՐԻՑ ՁՏՆՎԱԾ ՋԻԹԱՃՐԱԳՆԵՐԸ	384
Հասմիկ Հարությունյան, ԿՈՎԿԱՍԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԷԹՆՈԼԵԶՎԱԴԱԿԱՆԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ)	388
Արուսյակ Դարիբյան, ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ	401
Մերի Դալլաքյան, ԱՎԱՆԴԱԿԱՆ ՏԻԿՆԻԿԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ. ԵՔՊԹ-Ի ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՕՐԻՆԱԿՈՎ	407
Մարինե Հարությունյան, ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԻ ՏԻՊԵՐՆ ԱՐՑԱԽՈՒՄ XVII Դ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ ԵՎ XVIII Դ. ՍԿԶԲԻՆ	411

**ԱՐԿԵՍՏ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ**

Անի Նազարյան, ԳՅՈՒՄՐՈՒ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ ՎԻՐՏՈՒՄԸ ՏԻՐՈՒՅԹՈՒՄ	416
Siranuysh Araqelyan, ON A KHACHKAR (STONE CROSS) INSCRIPTION IN ARINJ	423
Garik Atanesyan, NEW INTERPRETATIONS OF PUBLIC FUNCTIONS OF MONUMENTS IN THE YEREVAN'S CONTEMPORARY PUBLIC DISCOURSE	427
Հայկազ Հովհաննիսյան, Հրանտ Ավանեսյան, Սահակ Հովհաննիսյան, Մարինե Մինասյան, ՄԱՐՏԻՐՈՍ ՍԱՐՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵՎՈՐ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՄԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	434
Հայկուհի Մուրադյան, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	441
Սնքառ Հովհաննիսյան, ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ՊՈՏԵՏԻՎԱՆ ԵՎ ՇԵՔՍՊԻՐԻ ՆՈՐՈՎԻ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ (ՆՈԹԵՐ ՈՒԼԷԱՍ ՇԵՔՍՊԻՐԻ «ՀԱՄԼԵՏԻ»՝ ԱՐԱՍ ԹՈՓՉՅԱՆԻ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ)	448
Анаит Зурабян, «МОДЕЛЬ ПУТИ» И ЕЁ ОТРАЖЕНИЕ В РОМАНЕ «ЖИЗНЬ И СУДЬБА»	462
Դիանա Հակոբյան, ԵՐԵՄԻԱ ՄԵՂՐԵՑՈՒ «ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ»-Ը՝ ՀԱՅԵՐԵՆ ԱՐԱՋԻՆ ԸՆԴԱՐՁԱԿ ԲԱՌԱՐԱՆ	467
Arevik Minasián, ANÁLISIS SEMÁNTICO DE LOS REFRANES Y PROVERBIOS CON EL COMPONENTE “PERRO” EN ESPAÑOL Y ARMENIO	473
Mariana Yepremián, ANÁLISIS SEMÁNTICO - COMPARATIVO DE LOS REFRANES Y PROVERBIOS QUE DENOTAN EL CONCEPTO GATO EN ESPAÑOL Y ARMENIO	482
Ասյա Դարբինյան, ՎՐԱՑԵՐԵՆԻ ՆԱԽԱՔԱՅԵՐՈՎ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐԸ	491
Լիանա Մալխասյան, ԻՐԱԿՈՒՆՔԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՍԿԶՐՈՒՆՔԻ ՆՇԱՆԱԿԱԿԻՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԻ ԻՐԱԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ	497

**ԳՐԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**

ՄԵԾԱՐԺԵՔ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՅ ԱԶԱՏԱՄԱՐՏԻ ԿԻՆ ՀԵՐՈՍՆԵՐԻ ՄԱՍԻՆ	503
ՊԱՏՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՇԱԳՐԱՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ	506

**ՄԵՐ ԵՐԱՆՏԱԿՈՐՆԵՐԸ**

САРКИС СУРЕНОВИЧ КАЗАРОВ	512
--------------------------	-----

**ՀԱԿԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴԸ**

ԷԴԿԱՐԴ ԳԱԼՈՒՍՏԻ ԴԱՆԻԵԼՅԱՆ	514
---------------------------	-----

ՀԱԿՈՒՔ ԲԱՂՂԱՍԱՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ. ԿԱՍՏԱԿԱՇԱՏ ԽՄԲԱԳԻՐՆ ՈՒ ԳՐԱԿԱՆԱԳԵՏԸ .....	516
<i>ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ</i> .....	519

**ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ  
ԵՎ  
ՄՇԱԿՈՒՅԹ**

**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԵՍ  
(ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴԿԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ)**

**Խմբագիր՝ Արման Եղիազարյան  
Համակարգչային ձևավորումը՝ Դիաննա Դավթյանի**

Հասցեն՝ 0025, Երևան, Արովյան 52  
Адрес-0025, Ереван, ул. Абовяна 52  
Address: 0025, Yerevan, Abovyan 52  
history@ysu.am, edikminasyan@hotmail.com,  
tel: 060-71-06-00, 055-92-88-00

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Այ. Մանուկյան 1  
«Մեկնարկ» ՍՊԸ տպարան, Երևան, Արովյան 41

Издательство ЕГУ, Ереван, ул. Ал. Манукян 1  
Типография ООО “Мекнарк”, Ереван, ул. Абовяна 41

**Տպաքանակը՝ 200**

«Պատմություն և մշակույթ» հանդեսում հրատարակված գիտական հոդվածները բավարարում են թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջները և ընդունելի են ԲՈՀ-ի կողմից:

### Ի ՊԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

*Հանդեսում հրատարակության ներկայացվող հոդվածների պահանջները.*

- ա) հեղինակի անուն, ազգանուն
- բ) հոդվածի խորագիրը (գլխատառերով)
- գ) հեղինակի գիտական աստիճանը, կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, էլ. հասցեն, հեռախոսահամարը
- դ) հոդվածի լուսանցքները. վերևում, ներքևում, աջ և ձախ կողմերում` 20 մմ, միջտողային ինտերվալը` 1.5, տառատեսակը` Unicode
- ե) ռուսերեն, անգլերեն ամփոփագրեր (5-8 տող), այլալեզու հոդվածի համար` նաև հայերեն ամփոփագիր
- զ) հայերեն, ռուսերեն, անգլերեն բանալի բառեր
- է) հղումները տողատակում
- ը) հոդվածը կարելի է ներկայացնել հայերեն, ռուսերեն և այլ լեզուներով, 10-20 էջ` անպայման գիտական ղեկավարի կամ մասնագիտական անբիռնի երաշխավորությամբ: